



**ԱՐԹՈՒՐ ԱՐԲԱՀԱՄՅԱՆ**

**ԼՂՀ Գերագույն դատարանի դատավոր**

**ԿՏԱԿԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**



Քաղաքակրթության շրջանի մարդիկ միշտ ունեցել են գույքը իրենց մահվանից հետո ժառանգների միջև հնարավոր տարբերակներով բաժանելու մտահոգություն: Կտակը ևս մարդկությանը հայտնի է շատ վաղուց, սակայն եթե նախկինում ունեցվածքի տերը իր մտադրությունը հայտնում էր բանավոր՝ ընտանիքի անդամներին, երբեմն էլ այլ անձանց ու հատկապես հոգևորականության ներկայացուցիչների ներկայությամբ, այժմ արդեն կտակը կազմվում է գրավոր, իսկ դրա օրինականությունը հաստատվում է հատուկ ստեղծված պետական մարմնի կողմից: Սեփականատիրոջ կողմից իրեն պատկանող գույքը տնօրինելու եղանակներից է այդ գույքի նկատմամբ կտակ կազմելը: Կտակը սեփականատիրոջ կամքի արտահայտման միջոց է, որով իր կենդանության օրոք անհատը որոշում է, թե իր գույքն ինչպես պետք է տնօրինվի իր մահից հետո: ԼՂՀ քաղաքացիական օրենսդրությունն ըստ էության նախատեսում է կտակի 3 տեսակ՝ սովորական, պայմանով և գաղտնի կտակներ: Սովորական կտակն այն է, երբ կտակարարը, առանց

որևէ պայմանի, սովորական գործարքների հաստատման վերաբերյալ կանոնների պահպանումով, դիմում է նոտարական գրասենյակ, որտեղ էլ ձևակերպվում է կտակը: Վերև արված դատողություններն ըստ էության վերաբերում էին սովորական կտակին: Պայմանով կտակն այն է, երբ կտակարարը կոնկրետ անձի կողմից ժառանգությունն ստանալը պայմանավորում է նրա վարքագծի բնույթի վերաբերյալ որոշակի օրինաչափ պայմանով: Նման կտակներում ժառանգ նշանակելու կամ ժառանգման իրավունքից զրկվելու վերաբերյալ ներառված ապօրինի պայմանները պետք է անվավեր համարվեն: Իսկ եթե կտակում ներառվել է այնպիսի պայման, որ ժառանգը չի կարող կատարել իր առողջական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառներով, ապա նման պայմանը կարող է ժառանգի հայցով անվավեր ճանաչվել դատական կարգով: Գաղտնի կտակը, որը ի դեպ, քաղաքացիական օրենսգրքում անվանվում է «փակ կտակ», նորություն է ԼՂՀ օրենսդրությամբ: Խոսքը վերաբերում է այն կտակին, որը կտակարարի ցանկությամբ նոտարը վավերացնում է՝ առանց ծանոթանալու նրա բովանդակությանը: Ուրեմն խոսքն իրքը վերաբերում է ոչ թե փակ, այլ գաղտնի կտակին: Գաղտնի կտակը պետք է գրի և անձամբ ստորագրի կտակարարը: Նման կտակը չի կարող, թեկուզև կտակարարի բառերով, գրի առնել մեկ ուրիշը, այդ թվում՝ նոտարը: Կտակարարն անձամբ գրում և ստորագրում է կտակը, ծրարում այն, ստսնծում, որի վրա իրենց ստորագրությունն են դնում երկու վկաները և ծրարը վկաների ներկայությամբ հանձնվում է նոտարին: Նոտարը վկաների կողմից ստորագրված ծրարը նրանց ներկայությամբ տեղադրում է մեկ այլ ծրարում, փակում (ստսնծում) է այն և վրան կատարում վավերացնող մակագրություն: Նման մակագրության մեջ պետք է տեղեկություններ պահպանվեն կտակարարի,



## ԼՂՀ դատական իշխանություն

ումից նոտարն ստացել է գաղտնի կտակը, գաղտնի կտակի ստացման վայրի, տարվա, ամսվա, ամսաթվի և յուրաքանչյուր վկայի անվան ու նրա բնակության վայրի մասին: Այս դեպքում ևս նոտարը, կտակարարից ստանալով կտակով ծրարը, պարտավոր է կտակարարին պարզաբանել ժառանգության պարտադիր բաժնի իրավունքը: Քաղաքացիական օրենսգրքը 1206-րդ հոդվածի կանոնները չպահպանելը հանգեցնում է գաղտնի կտակի անվավերության: Կտակի վավերությունը որոշվում է գործարքների վավերության մասին Քաղ. օր.-ի գործարքի ձևին, բովանդակությանը, գործարքի մասնակիցների կամքի և կամարտահայտության համապատասխանությանը, մասնակիցների գործունակությանը վերաբերող ընդհանուր կանոններով, ինչպես նաև՝ հաշվի առնելով ժառանգման իրավունքի նորմերը: Անհրաժեշտ է նշել, որ կտակն անձնական և ձևական գործարք է: Այն անձնական է, քանի որ այդ գործարքն արտահայտում է ժառանգատուի միակ և բացառիկ կամքը, և այն պետք է կատարվի նրա կողմից անձամբ և ոչ թե ներկայացուցչի միջոցով: Կտակը՝ որպես գործարք, նաև ձևական է, որովհետև այնքանով, որքանով կտակը գործողության մեջ է մտնում այն կազմողի մահվանից հետո, այն պետք է կազմվի որոշակի ձևով, որպեսզի կանխվի կտակարարի վերջին կամքի աղավաղման հնարավորությունը: Տեղին է նշել նաև, որ կտակը կազմելը ոչնչով չի սահմանափակում կտակարարի իրավագործությունը՝ օգտվելու կտակում նշված գույքից կամ այն տնօրինելու հնարավոր այլ եղանակներով: Կտակը կազմել կարող է ցանկացած լրիվ գործունակ քաղաքացի՝ ինքնուրույնաբար: ԼՂՀ քաղաքացիական օրենսդրությամբ առաջին անգամ սահմանվում է, որ «երկու և ավելի անձանց կողմից կտակ անել չի թույլատրվում»: Իհարկե, ոչ ոք չի կարող սահմանափակել կտակ կազմող անձանց թիվը: Մակայն այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե երկու և ավելի անձանց կողմից կտակ անելուն, այլ երկու և ավելի անձանց կողմից համատեղ կտակ անելուն, միևնույն կտակն անելուն: Այս կերպ կտակ անելն է, որ չի թույլատրվում: Ժառանգությունը բացվելուց հետո, եթե կտակ է հայտնաբերվում, երբեմն պարզվում է, որ այն միանշանակ չի ընդունվում ոչ միայն ժա-

ռանգների, այլև ուրիշ անձանց, այդ թվում՝ նոտարական մարմինների աշխատողների կողմից: Նրանցից ամեն մեկը յուրովի է հասկանում կտակի բովանդակությունը, և առաջանում է այն պաշտոնապես մեկնաբանելու անհրաժեշտություն: Իսկ մինչև վերջերս ոչ միայն այդ հարցն օրենքով չի կարգավորվել, այլև անգամ նախատեսված չի եղել կտակը մեկնաբանելու հնարավորությունը: Ի դեպ, կտակը մեկնաբանել կարող են պետական նոտարը, կտակարարը, դատարանը: Քաղ. օր.-ի 1210-րդ հոդվածի համաձայն՝ կտակը մեկնաբանելիս նոտարը, կտակարարը կամ դատարանը պետք է ելնեն կտակում պարունակվող բառերի ու արտահայտությունների տառացի նշանակությունից: Կտակի որևէ դրույթի տառացի իմաստը պարզ չլինելու դեպքում այն որոշվում է այդ դրույթը կտակի այլ դրույթների և ամբողջ կտակի իմաստի հետ համադրելու միջոցով: Ըստ որում՝ դրանով իսկ պետք է ապահովվի կտակարարի ենթադրվող կամքի առավել լրիվ իրականացում պարունակվող բառերի ու արտահայտությունների տառացի նշանակությունից: ԼՂՀ քաղ. օր.-ի 1203-րդ հոդվածի համաձայն՝ եթե կտակը գրավոր ձևով չի կազմվել, կամ նրանում չեն նշվել այն կազմելու վայրը կամ ժամանակը, անձամբ չի ստորագրվել կտակարարի կողմից և չի վավերացվել նոտարի կողմից, մնաց կտակը համարվում է անվավեր: Այդ մասին կտակարարին պետք է նախազույսացնի նոտարը:

Որոնք են կտակի ձևին բնորոշ առանձնահատկությունները և դրանից բխող վավերության պայմանները:

Կտակի ձևին բնորոշ առաջին առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ինչպես հին ժամանակներում, այնպես էլ այսօր, այն կազմվում է գրավոր:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1203-րդ հոդվածը ազդարարում է, որ կտակը պետք է կազմվի գրավոր՝ նշելով այն կազմելու վայրը և ժամանակը:

Կտակն իրենից ներկայացնում է մի այնպիսի փաստաթուղթ, որտեղ շարադրված է կտակարարի կամքը՝ իրեն պատկանող անձնական գույքն իր մահվան դեպքում տնօրինման վերաբերյալ:

Կտակը պետք է կազմվի գրական հայերեն լեզվով:



Սակայն կտակարարի ցանկությանը այն կարող է վավերացվել նաև օտար լեզվով /լեզուներով/, որոնք կարող են շարադրվել իրար հետևից կամ իրար կողքի, պայմանով, որ իրար հետևից տեքստերի շարադրման դեպքում՝ սկզբում գետեղվում է կտակի հայերեն տեքստը, իսկ իրար կողքի շարադրման դեպքում հայերենով կտակը շարադրվում է ձախ մասում:

Օտար լեզվով շարադրված կտակը վավերացնելիս՝ նոտարը հրավիրում է թարգմանիչ: Թարգմանիչը պետք է մանրակրկիտ թարգմանի հաստատվող փաստաթղթի բովանդակությունը և երաշխավորի, որ թարգմանությունը կատարված է ճիշտ, լրիվ և իր կողմից /օրենքի 37 հոդ. կետ 3/: Այս պարագայում, թարգմանիչն ստորագրում է թարգմանված կտակի տակ, թարգմանության իսկության ամբողջ պատասխանատվությունը վերցնելով իր վրա, իսկ նոտարն իր ստորագրությամբ և կնիքով հաստատում է թարգմանչի ստորագրության իսկությունը:

Օրենքի 37-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ «Թարգմանիչը քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր կողմից կատարած ոչ ճիշտ կամ ոչ լրիվ թարգմանության հետևանքով պատճառված վնասի համար»:

Միաժամանակ հայերեն և օտար լեզուներով վավերացվող կտակները ունեն միևնույն իրավաբանական ուժը: Իսկ դրանց միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է հայերենով վավերացվածին կամ հաստատվածին /օրենքի 30 հոդ. կետ 4/: Սա բացատրվում է նրանով, որ կտակը վավերացնող պաշտոնատար անձը նախ հաստատում է հայերեն լեզվով կազմված կտակը՝ հավաստիանալով, որ այն կազմվել է օրենքի շրջանակներում: Իսկ թարգմանչի կողմից թարգմանված համապատասխան կտակի տակ դրվում է թարգմանչի ստորագրության իսկությունը հավաստող վավերացման մակագրություն:

Եթե կտակ կազմելու ցանկություն հայտնած անձն օտարերկրյա քաղաքացի է, ապա նոտարը կտակի ձևին վերաբերող ԼՂՀ օրենսդրության պահանջները թարգմանչի օգնությամբ պարզաբանում է դիմողին՝ օտարերկրյա քաղաքացուն, որից հետո կազմվում է նախ հայերեն լեզվով կտակ, որը

ամբողջովին պետք է արտահայտի կտակարարի կամքը և համապատասխանի ԼՂՀ օրենսդրությանը, ապա նույնությամբ՝ գործարքին մասնակցող թարգմանչի կողմից թարգմանվի այդ անձին /օտարերկրացուն/ հայտնի լեզվով:

Միևնույն բովանդակության, սակայն տարբեր լեզուներով թարգմանված կտակի տակ չի թույլատրվում դնել մեկ վավերացման մակագրություն և ստորագրություն՝ օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն:

Սա պայմանավորված է նրանով, որ հայերեն լեզվով կազմված կտակի տակ նոտարը դնում է այնպիսի վավերացման մակագրություն, որով հավաստում է, որ կտակարարի ինքնությունը և գործունակությունն ստուգված է և կտակը ամբողջովին համապատասխանում է քաղաքացիական օրենսդրության պահանջներին:

Եթե խախտվում են վերը նշված պահանջները, ապա կտակը չի ունենում օրենքով նախատեսված ապացուցողական ուժ:

Կտակի տեքստում օրենքով չի թույլատրվում որևէ ջնջում կատարել: Կտակը պետք է գրված լինի պարզ, հեշտ ընթեռնելի և չպետք է պարունակի հապավումներ:

Կտակի ձևին բնորոշ երկրորդ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ կտակում պետք է նշվեն դրա կազմելու և վավերացնելու վայրը և ժամանակը /ԼՂՀ քաղ. օր. հոդ. 1023-րդ/:

Կտակը կազմելու վայրը՝ կտակը կազմելու և հաստատելու տեղի ստույգ հասցեն է:

ԼՂՀ-ում կտակը կարող է վավերացվել ցանկացած նոտարական գրասենյակում:

Եթե կտակը վավերացվում է նոտարական գրասենյակի շենքում, ապա կտակում չի նշվում նոտարական գրասենյակի հասցեն: Այս դեպքում, օրենսդիրը օրինաչափ է համարում միայն այն քաղաքի և շրջանի ստույգ նշումը, որտեղ գտնվում է տվյալ նոտարական գրասենյակը:

Եթե կտակը վավերացվում է նոտարական գրասենյակից դուրս, ապա կտակում պարտադիր նշվում է այն վայրի ստույգ հասցեն, որտեղ վավերացվել է գործարքը:

Կտակ կազմելու ժամանակն այն ստույգ տարեթիվը, ամիսը և ամսաթիվն է, երբ կազմվել և վավերացվել է կտակը:

Ըստ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ կետի՝



## ԼՂՀ դատական իշխանություն

«Նոտարական կարգով վավերացված կամ հաստատված փաստաթուղթն անվավեր է, եթե դրանում նշված չեն գործարքի կատարման տարին, ամիսը և ամսաթիվը կամ փաստաթղթի վավերացման, կամ հաստատման տարին, ամիսը և ամսաթիվը կամ կրողի կողմի անունը և ազգանունը /անվանումը/: Սույն կետում նշված, ինչպես նաև գործարքի մասնակցի՝ չստորագրված կամ մատիտով գրված փաստաթղթերն առչինչ են»:

Սրանից հետևում է, որ կտակ կազմելիս պարտադիր պետք է բառերով նշվի կտակը կազմելու և վավերացնելու տարին, ամիսը և ամսաթիվը, այլապես կտակը կհամարվի առչինչ: Հարկ է նշել նաև, որ կտակն ստորագրելու ժամկետը պետք է համապատասխանի այն հաստատելու ժամկետին: Եթե ստորագրելու ժամկետը կտակի տեքստում դրված է ավելի ուշ, քան այն հաստատելու ժամկետը, ապա դա նշանակում է, որ կտակը նախապես հաստատվել է սպիտակ թղթի վրա, հետո միայն լրացվել տեքստով:

Կտակի ձևի երրորդ առանձնահատկությունն այն է, որ կտակարարը անձամբ պետք է ստորագրի իր իսկ կողմից շարադրված տեքստի տակ:

Ներկայացուցիչների միջոցով կտակի վավերացում չի թույլատրվում: Սրանից հետևում է, որ եթե կտակարարն ինչ-ինչ պատճառներով չի կարող ներկայանալ նոտարական գրասենյակ, ապա նրան օրենքով վերապահված չէ իր անունից կտակ կազմելու պարտականությունը դնել մեկ այլ անձի վրա: Կտակ կազմել ցանկացողն իրավունք չունի լիազորել մեկին՝ կտակը կազմել իր անունից և ստորագրել այն իր փոխարեն:

Նման գործարքն ըստ ԼՂՀ քաղ.օր.318-րդ հոդվածի առչինչ է ի սկզբանե:

Կտակվող գույքի /կտակի առարկայի/ սեփականատերն անձամբ պետք է ստորագրի կտակը: Որպեսզի ակնհայտ լինի կտակարարի ով լինելը, նոտարը կամ համապատասխան իրավասություն ունեցող անձը, պարտավոր է պահանջել անձի ինքնությունը հավաստող փաստաթուղթ և ստուգելով այն՝ համապատասխան տվյալներ /անուն, ազգանուն, ծննդյան թիվ, անձնագրի համար, անձնագրի տրման ամսաթիվ, բնակության վայր/ ներառել կտակի տեքստում:

Եթե կտակարարը ֆիզիկական թերու-

թյունների, հիվանդության կամ անգրագիտության պատճառով չի կարող անձամբ ստորագրել կտակը, ապա նրա խնդրանքով նոտարի կամ օրենքին համապատասխան կտակը վավերացնող այլ անձի ներկայությամբ այն կարող է ստորագրվել այլ անձի կողմից՝ կտակում նշելով այն պատճառները, որոնց դեպքում կտակարարը չի կարողացել ստորագրել այն: Տվյալ պարագայում կտակում պարտադիր պետք է նշվի կտակարարի փոխարեն ստորագրող անձի անունը, ազգանունը և նրա հաշվառման վայրը /ԼՂՀ քաղ. օր. 1204-րդ հոդ.:/:

Հարկ է նշել, որ եթե կտակը կազմելիս, տեքստը կարդալիս, ստորագրելիս և վավերացնելիս օրենքը պարտադրում է վկայի ներկայությունը, ապա պարտադիր է նաև կտակում ներառել գործարքում որպես վկա մասնակցող անձի անձնագրային տվյալները, հաշվառման վայրը:

Վկայի ներկայությամբ վավերացվող գործարքում, վկայի ստորագրության առկայությունը կտակում պարտադիր է: Եթե կտակի առարկան կտակը կազմելու պահին հանդիսանում է կտակարարի սեփականությունը, ապա նոտարի կողմից համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո, կտակում նշվում է կտակի առարկայի /կտակվող գույքի/ համապատասխան տվյալները:

Հնարավոր է, որ քաղաքացին դիմի նոտարին՝ խնդրելով ձևակերպել կտակ այն գույքի /կտակի առարկայի/ վերաբերյալ, որը նա պատրաստվում է գնել մեկ շաբաթ հետո: Այս պարագայում նոտարն իրավունք չունի մերժել դիմող քաղաքացուն, քանի որ ԼՂՀ քաղ. օր. 1199-րդ հոդվածը սահմանում է, որ կտակարարն իրավունք ունի կազմել ցանկացած՝ ներառյալ ապագայում ձեռք բերվելիք գույքի վերաբերյալ կարգադրություն բովանդակող կտակ: Այս պարագայում, կտակարարը չի կարող ստույգ տեղեկություն հաղորդել կտակի առարկայի վերաբերյալ, ուստի առանց փաստաթղթերին ծանոթանալու նոտարը վավերացնում է քաղաքացու կտակը, ամբողջ պատասխանատվությունն ու հետագա վավերությանն ապահովվածությունը թողնելով կտակարարի վրա:

Օրենսդիրը կտակ կազմելու ցանկություն ունեցող անձանց տվել է այս հնարավորությունը, գիտակցելով այն չնախատեսված



երևույթը /մահը/, որը ոչ ոք չի կարող կանխատեսել կամ հետաձգել:

Իսկ ժառանգություն է բացվում միայն կտակարարի սեփականությունը հանդիսացող այն գույքի նկատմամբ, որը ժառանգության բացման օրը առկա կլինի: Սա պայմանավորված է նրանով, որ կտակը հաղիսանում է մեկ անձի կամքի արտահայտություն: Նույնիսկ ամուսինները համատեղ սեփականությամբ իրենց պատկանող գույքը կտակելիս ազատ են՝ յուրաքանչյուրն իրեն պատկանող մասը կտակելու առումով:

Ի տարբերություն արտասահմանյան մի շարք երկրների /ԱՄՆ, Անգլիա/ օրենսդրության, ԼՂՀ քաղ. օր-ը չի նախատեսում երկու անձանց կողմից համատեղ կտակ կազմելու հնարավորություն:

Քանի որ կտակը գործում է կտակարարի մահից հետո, մեր կարծիքով, կտակին ներկայացվող չորրորդ պահանջն այն է, որ կտակում ստույգ պետք է նշվի այն անձի /ժառանգի/ տվյալները, ում կտակվում է գույքը:

ԼՂՀ քաղ. օր-ը չի պարտադրում, որ կտակում նշվի ժառանգի /ժառանգների/ տվյալները: Հետևաբար կտակը վավերացնող պաշտոնատար անձը իրավասու չէ պահանջել ժառանգի ինքնությունը հավաստող փաստաթուղթ: Օրենսդիրը ժառանգի անձնագրային տվյալների առկայությունը և կտակի տեքստում այն ընդգրկելը չի կարևորել՝ ելնելով կտակի գաղտնիության սկզբունքից: Սակայն, տվյալ պարագայում խոսքը ըստ կտակի ժառանգի հետագա իրավական ապահովվածության մասին է:

Ուստի, մեր կարծիքով, ավելի նպատակահարմար է, որ կտակ կազմելիս կտակարարը ներկայացնի ըստ կտակի ժառանգի ինքնությունը հաստատող փաստաթուղթ, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա այդ փաստաթղթի պատճենը:

Նոտարական պրակտիկայում պատահել են դեպքեր, երբ կտակարարը կտակում անգորշորեն սխալ է նշել ժառանգի անուն, ազգանունը: Մասնավորապես, պարզվել է, որ ժառանգն ունեցել է երկրորդ անուն, որը չի համընկել նրա անձնագրային անվան հետ: Քանի որ, կտակ կազմելու ցանկացողները մեծ մասամբ լինում են տարեց, մեծահասակ մարդիկ, հետևաբար մեծ վրիպումը բացառելի չէ:

Կտակի ձևին վերաբերող հիմնգերքող պահանջն այն է, որ այն պետք է վավերացվի /հաստատվի/ հանրային հեղինակություն ունեցող մարմնի կողմից: Դեռևս Հին Հռոմում կտակը պարտադիր կազմվում էր որևէ հեղինակություն ունեցող մարմնի ներկայությամբ:

Հռոմում կտակը կազմվում էր երկու ձևով. 1.testamentum comitiis calatis, 2.testamentum in procinctu:

Առաջինը կազմվում էր ժողովրդական ժողովի առջև, որն այդ նպատակով գումարվում էր pontifex maximus-ի կողմից՝ տարին երկու անգամ:

Երկրորդը՝ պատերազմի ժամանակ կազմված կտակն էր, որը պարտադիր պետք է գրվեր գորքի առջև:

Այսպիսով, կտակ կազմելու նշված երկու ձևերն էլ կրում էին հրապարակային բնույթ:

Հռոմեացի իրավաբան Ուլպիանոսն այսպես էր բնորոշում կտակը. «Կտակը դա կամքի իրավաչափ արտահայտություն է, որն արված է հանդիսավոր, զուտ նրա համար, որպեսզի այն անկասկած գործի մահից հետո»:

Ժառանգման իրավունքում, կտակի ձևին վերաբերող հռոմեական սկզբունքը, պահպանվել է գրեթե բոլոր քաղաքակիրթ պետություններում: Ուստի, որպեսզի կտակը հանդիսանա իրավական փաստաթուղթ, ապահով լինի անցանկալի ոտնձգությունից, այն պետք է վավերացվի հանրային հեղինակություն վայելող մարմնի կողմից:

Դեռևս միջնադարյան Հայաստանում, ըստ Մ.Գռչի Դաստատանագրի /գլուխ ԾՁԳ/ «Կտակը արվում էր քահանայի, եկեղեցու սպասավորների և երեք վկաների ներկայությամբ, և բացառապես ուժի մեջ մտնում կտակարարի մահից հետո: Եթե պատահում էր, որ անձը մույն օրը մահանում էր, ապա կտակը համարվում է հաստատված: Իսկ եթե անձն առողջանում էր, նա իրավունք ուներ ցանկության դեպքում փոխել կտակը՝ ավելացնելով այն և ոչ թե նվազեցնելով»:

Արդի ժամանակաշրջանում ԼՂՀ-ում կտակը պետք է կազմվի գրավոր՝ անձամբ ստորագրվի կտակարարի և վավերացվի օրենքով նախատեսված պաշտոնատար անձի կողմից: Քաղ. օր. 1203-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ձևի խախտումով կազմված կտակն անվավեր է:

Համաձայն ԼՂՀ քաղ. օր-ի 1205-րդ հոդ-



## ԼՂՀ դատական իշխանություն

վածի 1-ին մասի՝ կտակը վավերացնում է նոտարը նոտարիատի մասին օրենքով սահմանված կարգով:

«Նոտարիատի մասին» օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ նոտարը հանրային ծառայություններ իրականացնող պաշտոնատար անձ է, որը ԼՂՀ անունից, ԼՂՀ Սահմանադրությանը և օրենսգրքին համապատասխան իրականացնում է նոտարական գործողություններ և այլ գործունեություն:

Նշվածից բխում է, որ նոտարի ստորագրությամբ և նոտարական գրասենյակի կնիքով վավերացված կան հաստատված փաստաթուղթն ունի օրենքով նախատեսված հանրային հեղինակություն և լիարժեք ապացուցողական ուժ:

1. ՀՀ քաղաքացիական իրավունք: Երևան, 2001:

2. ԼՂՀ քաղաքացիական օրենսգիրք:

3. «Նոտարիատի մասին» ԼՂՀ օրենքը:

4. Ярошенко К.Б. Наследование по завещанию

Комментарий судебной практики, Москва, 2001г.

5. Новицкий И.Б. Римское право, Москва, 2002г.

6. Միխրիար Գոշի դաշխարանագիրք, Երևան, 2001:

7. Основы государства и права зарубежных стран, Москва, 2003г.